

Ժողովուրդ

101
(2767)

13 հունիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՆ ԽԱՆՏՎԵԼ




Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը ժամկետների խախտումով է գործում: Բանն այն է, որ արդեն երեք անգամ իրավական ակտեր են խախտվել: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ երեք անգամ փոփոխություններ են կատարվել իրավական ակտերում, բոլորն էլ՝ 2020 թվականին: Այդ ակտերում հստակ նշված են ժամկետներ, թե երբ պետք է պատրաստ լինի փոփոխությունների նախագիծը, սակայն դրանք խախտվել են: Այսինքն՝ սահմանված իրավական ակտի խախտումներ են եղել: Հանձնաժողովն իր աշխատանքները պետք է ավարտեր դեռ 2022 թվականին, եւ վերահսկող պետք է լիներ վարչապետը, սակայն հենց Սիկոյ Փաշինյանն է խախտման հեղինակը: Ստացվում է՝ կա նաեւ խորհուրդ, եւ մասնագիտական հանձնաժողովը ենթակա է այդ խորհրդին: Խորհուրդը պետք է արձանագրեր խախտումները, բայց նրանք էլ աչք են փակել: Իսկ վերահսկողությունը պետք է իրականացներ ՀՀ արդարադատության նախարարությունը՝ նախկին նախարար Կարեն Անդրեասյանը եւ արդեն ներկայիս նախարար Գրիգոր Մինասյանը: Նրանք էլ դա չեն արել, քանի որ Սիկոյ Փաշինյանին չեն ցանկացել «նեղացնել» իրենց քայլերով: Արդյունքում հանցագործություն է եղել, որը չի արձանագրվում:

Մինչեւ հեղափոխությունը 100-դրամանոց երթուղայինով տեղաշարժվող Նարեկ Բաբայանի գործերը լավ են արդեն: Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Նարեկ Բաբայանի ներկայացրած հայտարարագրից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվում է, որ նախորդ տարի պատգամավորը Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում 27 մլն դրամ արժողությամբ բնակարան է գնել, որի համասեփականատերն է հանդիսանում: Նա դեռ 2017 թվականին Կոտայքի մարզի Առինջ գյուղում եւս բնակարան էր գնել, որի համասեփականատերն է հանդիսանում կրկին: Ներկայիս պատգամավորը 2021 թվականի փետրվարին 2009 թվականի արտադրության «Տոյոտա» է գնել: Այդ ժամանակ Բաբայանը հանդիսանում էր Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահը: ՔՊ-ական պատգամավորը, չգիտես՝ ինչու, կանխիկ դրամ չի ունեցել, իսկ բանկային հաշիվներում նրա դրամական միջոցները կազմել են 53 հազար եւ 521 հազար դրամ: Նարեկ Բաբայանը մեկ տարվա ընթացքում միայն պատգամավորական աշխատավարձից է եկամուտ ստացել, սակայն նրա ծախսերի մասին որեւէ տեղեկություն հայտարարագրում անկա չէ: Նրա կինը՝ Լենա Նազարյանը եւս ներկայացրել է իր հայտարարագրել է Ծաղկաձորի եւ Առինջի բնակարանները, որոնց համասեփականատերն է ամուսնու հետ, սակայն Նազարյանը դեռ 2009 թվականին Նորք-Մարաշում անհատական բնակելի տուն է ժառանգություն ստացել: Նազարյանը եւս ամուսնու պես կանխիկ դրամ չի ունեցել, սակայն բանկային հաշիվներին 1 մլն դրամ է եղել: Պարզվում է՝ Լենա Նազարյանն անհատ վարձակալ է եւ մեկ տարվա ընթացքում վարձակալությունից 1 մլն 500 հազար դրամ է ստացել, եւս 8 մլն դրամ ստացել է ԱԺ-ից, իսկ 34 հազար դրամ էլ՝ «Կանանց իրավունքների տուն» կազմակերպությունից: Նազարյանը նաեւ 43 մլն դրամի վարկ ունի եւ 2 մլն 100 հազար դրամ է ծախսել այդ վարկի տարեկան մարման համար: Վերջում հավելենք, որ կոռուպցիան «բարեւում է» պատգամավոր գույզերին:



Գազիկ Զհանգիրյանի թոշակի գործը դատական համակարգում գլխացավանք է դարձել: Մեզ հայտնի դարձավ, որ թոշակի պահանջի գործով դատավոր է փոխվել: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Գազիկ Զհանգիրյանը 2022 թվականի դեկտեմբերի 27-ին դատարան է ներկայացրել հայցադիմում՝ ընդդեմ ՀՀ միասնական սոցիալական ծառայության, եւ խնդրել է դատարանին պարտավորեցնել ՀՀ միասնական սոցիալական ծառայությանը ընդունել Գազիկ Վրեժի Զհանգիրյանին դատախազի կենսաթոշակ նշանակելու մասին որոշումը: Դրանով նա միեւնույն ժամանակ պահանջում է անվավեր ճանաչել ՀՀ միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի՝ 05.12.2022 թվականի գրությունը եւ 04.10.2022 թվականի որոշումը, որով Գազիկ Զհանգիրյանին կենսաթոշակ չէին նշանակել: Ասել է թե՛ ՀՀ միասնական սոցիալական ծառայությունը հրաժարվել է ԲԴԻ նախկին նախագահին դատախազի կենսաթոշակ նշանակել, եւ հիմա նա դատարանով է փորձում վերականգնել թոշակի իր իրավունքը: Այս գործը քննում էր դատավոր Աննա Դիլբարյանը, եւ հիմա կազմի փոփոխություն է եղել. այն մակագրվել է դատավոր Անի Զիլինգարյանին:



Ութերորդ գումարման խորհրդարանի զարնանային նստաշրջանն ավարտվել է, սակայն արտահերթ նիստերի պակաս չի զգացվում: Երեկ եւս արտահերթ նիստ է գումարվել կառավարության նախաձեռնությամբ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս նստաշրջանը վերջինն է լինելու, քանի որ երկուշաբթի օրվանից պատգամավորները գտնվելու են արձակուրդում: Տեղեկացանք, որ օրակարգում չորս հարց է, որոնցից երկուսն անցնելու են առաջինից երկրորդ ընթացքում: Ամեն դեպքում, նիստը կաճատեւ է լինելու: Այսպիսով, հարցերից մեկը վերաբերում է կառավարության կառուցվածքում փոփոխություն կատարելուն: Այս նախագծով վարչապետն իրավասու է ձեւավորելու միջազգային դատարաններում դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողով: Օրինակ՝ քաղաքացիական հրազեն կրելու համար հատուկ լիազոր մարմինն պետք է քննություն հանձնել: Մի խոսքով, էլի կարելու էր նախագծերը արտահերթով են ներկայացնում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՐՈՒՅՑ

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երեւանի ավագանու նախկին անդամ Լյուդմիլա Սարգսյանը թեև դուրս է եկել քաղաքականությունից, սակայն «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում խոսեց Երեւանի քաղաքապետի ստղծվելիք ընտրությունների մասին:

-Տիկին Սարգսյան, ի՞նչ կարծիք ունեք քաղաքապետի ընտրությունների մասին, ի՞նչ սպասելիքներ ունեք:

-Ես կարծում եմ՝ ինչքան շատ լինեն թեկնածուները եւ ամուր թիմեր ունենան, այնքան հետաքրքիր պայքար կլինի: Բայց առայժմ չեմ տեսնում շատ ուժեղ թիմեր, որոնք կարող են իրապես մրցակցություն վարել իշխող թիմի հանդեպ:

-Տիկին Ավինյանը հավակնում է լինել Երեւանի քաղաքապետ. այս մասին ի՞նչ կարծիք ունեք, արժանի՞ հավակնորդ է:

-Տիկին Ավինյանը ռեալ հաղթանակ տանելու հնարավորություններ ունի: Մյուսների հարցն այլ է, որ եթե չհաղթեն, գոնե մասնակցություն ապահովեն: Ցանկալի է՝ ոչ թե 3, այլ 4-5 քաղաքական ուժ լինի, որովհետեւ եղպես ավելի ճիշտ կլինի, կարծիքների բախում է տեղի ունենում, ընդդիմությունն ավելի լավ է ներկայացված լինում քաղաքապետարանում, եւ, վերջապես, այդ նույն թիմերը հետագայում պատրաստվելու են խորհրդարանական ընտրություններին, շատ լավ կլինի, որ քաղաքապետի ընտրություններում որոշակի կայացվածություն ունենան, որպեսզի կարողանան լուրջ պայքարի մեջ մտնել: Հայաստանի քաղաքական դաշտը, կարծես, ամայացած լինի, եւ լավ կլինի, որ նորաստեղծ ուժերը լուրջ պայքարի մեջ կարողանային մտնել: Հիմա ռեալ սերնդափո-



խություն է տեղի ունենում քաղաքական դաշտում:

-Տիկին Սարգսյան, ի՞նչ կասեք Հայկ Մարությանի՝ քաղաքականություն վերադարձի մասին:

-Կարող եմ ասել, որ Հայկ Մարությանը թիմ չունի, այսինքն՝ քաղաքական պայքարի մեջ մտնելու համար նախ պետք է կուսակցություն ունենալ, եւ այդ կուսակցությունը պետք է կազմված լինի քաղաքական մարդկանցով: Ես որքան գիտեմ, Հայկ Մարությանը նման հնարավորություն դեռ չունի. եթե նույնիսկ ստեղծի էլ, նա լուրջ քաղաքական

պայքար չի կարող տանել, որովհետեւ եղ քաղաքական փորձը չկա թիմում:

-Ըստ Ձեզ՝ ո՞վ կարող է լինել Երեւանի քաղաքապետ, որը կբավարարի Նշված պահանջները:

-Միայն Տիկին Ավինյանն ունի նման քաղաքական թիմ, առայժմ այլ քաղաքական ուժ չեմ տեսնում: Մյուս թիմերը որոշակի մրցակցություն կապահովեն, բայց ռեալ հաղթանակ տանել չեն կարողանա: Դավիթ Խաժակյանն էլ բավականին հաջող թեկնածու է, բայց, միեւնույնն է, մրցակից չէ Տիկին Ավինյանին:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախօրեին Ազգային ժողովում միաձայն ընդունվեց ԱԺ մարդու իրավունքների դաշտայնության եւ հանրային հարցերի մեծահասակ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանին լիազորությունների զրկելու մասին նախագիծը: «Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ գրուցել է «Ազգաքաղաքացի» ֆաղափարակային նախաձեռնությունների աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ Հովսեփ Խուրբուրդյանի հետ՝ հասկանալու համար, թե նա ինչ կարծիք ունի ստեղծված իրավիճակի մասին:



որ ԱԺ-ն պետք է ավելի ներառական ընթացակարգով որոշումներ ընդուներ:

«Իհարկե, ԶԳ-ի փաստարկումը պատգամավորի, հանձնաժողովի նախագահի՝ 46 նիստերից 38-ին բացակայելու մասին ես ընկալելի է, եւ ես էլ եմ այդքան բացակայություններն անընդունելի համարում, սակայն ինձ համար տարօրինակ էր այն արագացված ընթացակարգը, որով տիկին Թովմասյանը զրկվեց հանձնաժողովի նախագահի իր պաշտոնից: Հարցի վերա-

բերյալ Հովիկ Աղազարյանի՝ 9 թույլ տեսած զեկույցին ի պատասխան՝ նրան որեւէ մեկը ԶԳ խմբակցությունից անգամ հարց չուղղեց: Որպես ՀՀ քաղաքացի՝ կգերադասեի, որ ՀՀ Ազգային ժողովն ավելի ներառական ընթացակարգով որոշումներ ընդուներ, մասնավորապես՝ երբ խոսքը գնում է նման կարեւոր հանձնաժողովի նախագահին պաշտոնանկ անելու մասին», - ասաց Խուրբուրդյանը:

Նյութերը՝ ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ



ԱՆԻՐԱԿԱՐՁ՝ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԿԱՐԵՑՄԱՆԸ

Իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանը սոցցանցի իր էջում գրառում է կատարել՝ անդրադառնալով Թագուհի Թովմասյանի լիազորությունների դադարեցմանը. «Վերջապես իշխող կուսակցությունը լիարժեքորեն, իր սրտի ուզածով կարգավորեց Հայաստանում մարդու իրավունքների ոլորտը:

Այլեւս չի գտնվի մեկը, որը սույն հանձնաժողովում կբարձրաձայնի ԶԳ-ապակման թի սանձարձակ պահվածքը: Երբ ուզեն, կթքեն, միջնադարյան սպառնալիքներով հանդես կգան՝ լեզուր, ակննջներով կկտրեն: Ինչպես հայտարարում են, հանձնաժողովի նախագահի պաշտոնում նոր թեկնածու էլ չեն առաջադրի. նախագահի պարտականությունները կկատարի հանձնաժողովի իշխանական փոխնախագահը: Փառք ասած, նա էլ բռնություն կրող է»:

ԿԻՆԸ ԾՊՏՅԱԼ ԶԱՂԱՔԱՊԵՏՆ ԷՐ

«Քաղաքապետը» մոնոներկայացման տոմսերը միանգամից սպառվեցին, ինչը խոսում է այն մասին, որ մարդիկ իրապես կարող են էին դերասան Հայկ Մարությանին:


Վերջերս հյուրախաղերից վերադարձած Մարությանը, ասում են, ցանկանում է վերադառնալ քաղաքական դաշտ: Եւ մինչ պարզ կդառնա, թե արդյոք նա կմիանա ինչ-որ քաղաքական ուժի կամ կիսիմ-նի խորը (քանի որ պայմանավորվածությունները արագ փոխում է), մարդկանց մի մասը ափսոսանք է հայտնում լսելով Մարությանի՝ քաղաքականություն վերադառնալու մասին:

Կհարցնեք՝ ինչու. պատասխանը պարզ է. Մարությանը լավ դերասան է, եւ դա է իր կոչումը կյանքում: Կարծիք էլ կա, թե նա, այնուամենայնիվ, ոչ արդյունավետ եւ թույլ ղեկավար էր: Որպես հիմնավորում մատնանշվում է, որ չնայած 2018 թվականին ժառանգած՝ առանց այդ էլ խարխված ենթակառուցվածքներով քաղաքին, այդ, Մարությանին հաջողվեց լուծել աղբահանության խնդիրները: Բայց իրականում Երեւանի քաղաքապետը կոմունալ վարչության պետը չէ. քաղաքն ունի բազմաթիվ այլ շատ կարեւոր, ուշադրության արժանի խնդիրներ, որոնք հավասարապես պետք է տրվել լուծումներ, բայց չեն արվել: Վերջնապես ընդունված Երեւանի զրարձակ հարմարավետ եւ բարեկարգ: Միգուցե նախընտրական խոստումներ իրականացնելուն խանգարեց նաեւ պարոն Մարությանի կինը՝ Իվա Մարությանը, ում անունը սկսեց շահարկվել՝ որպես նախկին քաղաքապետի փոխարեն որոշումներ կայացնողի: Համացանցում կան բազմաթիվ աղմուկ հանած հոլովակներ՝ քաղաքապետարանի աշխատակիցների դժգոհություններով տիկին Մարությանի որոշումներից՝ երբ ում եւ որտեղ Նշանակել, ում աշխատանքից ազատել: Ասում են նաեւ, որ նա ուներ հասանելիություն քաղաքապետարանի ներքին փաստաթղթերին եւ իրականում ուներ շատ ավելի մեծ որոշումներ կայացնելու աղէցություն կառույցի ներսում, քան դրա մասին խոսում էին: Մարությանը ինքն էլ չի հերքել, որ իր կինն օգնում է իրականացնել իր քաղաքական թիմի տված խոստումները: Ինչ վերաբերում է Հայկ Մարությանի քաղաքական թիմին, այդպես էլ պարզ չդարձավ, թե կոնկրետ ինչ հակասություններ կային իր եւ ԶԳ-ի միջեւ: Թերեւս այս հարցի պատասխանն ինչ-որ պահի ջրի երես դուրս կգա եւ կառաջացնի նոր հարցեր՝ ուղղված Հայկ Մարությանին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԳՐԱՌՈՒՄ

Ո՞ՐՆ Է «ՀԱՅԱՔՎԵ»-Ի ՆՊԱՏԱԿԸ



«Ինչդեռ խոսացել էի, այսօր շարունակում եմ դասասլսանել «Հայաքվե»-ի հետ կապված առավել սարսափած հարցերին: Այսօր ցանկանում եմ հասնել անդրադառնալ մի հարցի, որը մեր համար անակնկալ է առաջացել, իրականում օրհասառության մեջ է դրվել զուտ կոնկրետ մեկ ուժի կողմից, եւ շատ կոնկրետ նպատակով»,- Facebook-ի իր էջում գրել է «Հայաքվե» նախաձեռնության համակարգող Ավետիս Չալաբյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Հարցարկյոք օրենքի նախագծի մեջ «այլ պետություն» արտահայտությունը վերաբերում է նաեւ Հայաստանին, եւ արդյոք այս օրենքի նախագիծը չի՞ նախաձեռնվել Արցախը Հայաստանից պոկելու համար:

Պատասխան. ուղիղ հակառակը՝ «Հայաքվե»-ն նախաձեռնվել է Հայաստանի եւ Արցախի վերամիավորման նպատակով, եւ հետեւյալ պարզ հիմնավորումներով.

ա) օրենքի նախագիծը շարադրված է հետեւյալ կերպ՝

«Հայաստանի Հանրապետության անուկից Արցախը որեւէ այլ պետության կազմում ճանաչելը պատժվում է ազատագրկամա՞ր տասից տասնհինգ տարի ժամկետով»: Քանի որ խոսքը գնում է Հայաստանի Հանրապետության անուկից, ապա «այլ պետություն» արտահայտությունը վերաբերվում է բացի Հայաստանից այլ պետությունների. իրավականորեն եւ քերականորեն դա ակնհայտ է:

բ) Օրենքի նախագծի հիմնավորումը ուղիղ հենվում է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի վրա, որը սկսվում է հետեւյալ նախաբանով՝ «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռ-

նային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա»: Սա միարժեք ձեւակերպում է, քանի որ այդ որոշմամբ Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների վերամիավորման սկիզբն է դրված, եւ մեր նախաձեռնությունը հենվում է հենց այս հիմնարար նպատակի վրա:

գ) Օրենքի նախագիծը պատժամիջոց է նախատեսում «Սահմանադրական կարգի դեմ ուղղված» հանցագործությունների բաժնում, որից եւս հետեւում է, որ այս պատիժը կիրառվում է այն պաշտոնատար անձի դեմ, որն իր գործողություններով խոչընդոտում է Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագրում եւ դրա միջոցով ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրած վերամիավորման սկզբունքը

իրագործելուն՝ Արցախը ճանաչելով այլ պետության կազմում:

Մեր նպատակը միավորված եւ հզոր հայկական հայրենիքն է, եւ ցանկացած ոք, ով խոսքով կամ գործով ծառայում է նույն նպատակին, պետք է դադարեցնի պառակտչական քայլերը, դուրս գա ազնիվ երկխոսության եւ կենտրոնանա նրա վրա, թե ինչպես համատեղ ուժերով մենք հասնենք մեր երազանքների իրականացմանը: Մինչ այդ շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր արդեն իրենց վստահության քվե են տվել «Հայաքվե»-ին, եւ կոչ եմ անում մեր բոլոր հայրենատեր եւ արժանապատիվ քաղաքացիներին էլ միասնալ այս կարեւորագույն նախաձեռնությանը: Աստված զորավիգ մեր միասնական հայրենիքին, եւ իր համար պայքարող մեր քույրերին եւ եղբայրներին»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ



«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորատուս համայնքից սկսած մինչեւ Երանոս համայնքն ընկած անտառային հատվածում սոճիները համատարած չորացել են, ավելին տեսախցիկը ֆիքսել է, թե ինչպես են արդեն իսկ համարակալվել են այդ ծառաբնույթները, եւ անտառային այդ հատվածը վերածվել է բնապահպանական աղետի:

«Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր անտառագետ Սասուն Գալստյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց, որ սոճիների անհասկանալի հիվանդության համար հատուկ Հայաստան են ժամանել Ռուսաստանից մասնագետներ եւ անձամբ վերցրել փորձանմուշներ:

«Շրջակա միջավայրի նախարարության եւ մեր ռուս գործընկերների հետ համատեղ այս պահին ընթանում են ուսումնասիրություններ, քննարկումներ: Կարող եմ ասել, որ այս պահին Գիտության ակադեմիան թույլատրել է իրականացնել հիվանդ, ոչ կենսունակ ծառերի հատում, սակայն դեռ նախարարության կողմից որոշում այդ մասով չկա: Կարծում եմ, որ շուտով կլինի»,-նշեց գլխավոր անտառագետը:

Նշենք, որ խոսքը մոտ 8400 հիվանդ սոճիների մասին է, որոնք ենթակա են հատման եւ անգամ թափուկ չեն կարող լինել:

ՇՈՒՆՈՒՄ ԻՆՏԵՐՎՅՈՒՄ ՀԱՆՔԻՍՏ Է

Շումնուխում ամեն ինչ նորմալ է, լարվածություն չկա: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց

ԳՈՐԾԸ՝ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ

ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի գործը Հակակոռուպցիոն դատարանում մտնում է առավել աղմկահարույց փուլ: Բանն այն է, որ գործով դատարան է հրավիրվելու վերջին վկան՝ Հայաստանի Հանրապետության ԶՈւ ավիացիայի պետ-վարչության նախկին պետ Գագիկ Ասլանյանը, որից հետո սկսվում է մեղադրյալների հարցաքննության փուլը: Ասել է թե՛ խոսքը հասնում է ՊՆ նախկին պաշտոնյաներին՝ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Ավետիք Մուրադյանին, գործարար Դավիթ Գալստյանին՝ Պատրոն Դավոյին:

Հիշեցնենք, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջարկվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ԶՈՒ ԳԾ պետ Արտակ Դավթյանին, ԶՈՒ ԳԾ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին: Քրեական գործով այս պահին «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիւնարկում «ԿԳԲ-ի պաղվալում» են գտնվում ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, զինված ուժերի ԳԾ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Ավետիք Մուրադյանը, իսկ մյուս մեղադրյալները ազատության մեջ են:

Գործը Հակակոռուպցիոն դատարանում քննվում է դռնփակ:

ԸՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՄԱՀՄԱՆԻՆ

«Գյուղում լարվածություն չկա, ամեն ինչ նորմալ է: Կրակոցները դիրքերի ուղղությամբ են եղել, գյուղում չեն լսվել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը՝ անդրադառնալով սահմանային լարված իրավիճակին:

«Ժողովուրդն իր առօրյա գործերով է, խուճապային իրավիճակ չկա»,- հավելեց նա:

Հիշեցնենք, որ երեկ՝ հուլիսի 12-ին՝ ժամը 12:10-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հերթական անգամ կրակ էին բացել Տեղի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետեւանքով վիրավորում է ստացել Հայաստանի Հանրապետության ԶՈՒ զինծառայող Ն. Թ.-ն:

Զինծառայողի վիճակը գնահատվում է միջին ծանրության, կյանքին վտանգ չի սպառնում:

Նշենք նաեւ, որ ավելի վաղ Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները կրակ էին բացել Տեղի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետեւանքով վիրավորում էր ստացել նաեւ ՀՀ ԶՈՒ զինծառայող Ե. Խ.-ն:

Լ. ԵՐԻԱԶՈՐՅԱՆ

Սյունիքի մարզի սահմանային Շումնուխ համայնքի ղեկավար Հակոբ Արշակյանը:

«Վերջին ամիսներին մեզ մոտ հանգիստ է՝ ի տարբերություն, օրինակ, Տեղ համայնքի: Գյուղացիներից ամեն մեկը զբաղված է իր գործով, բոստանները մշակվելով: Ժողովուրդը խոշոր եղջերավոր անասուններին վերացրել է, ոչխար են հիմնականում պահում, քանի որ արտավայրեր չկան առաջվա նման, հակառակորդի կողմն էլ որ անցնում են, ետ չեն վերադարձնում: Բնակիչները բոլորն էլ իրենց տեղում են, բացի 4 ընտանիքից, որովհետու մարդիկ մնալու տեղ չունեն, սպասում են, մինչեւ իրենց տները կառուցեն»,-նշեց մեր զրուցակիցը՝ միեւնույն ժամանակ հավելելով, որ գյուղացիների մոտ խուճապային տրամադրություն չկա, ավելին՝ մարդիկ մարտական են տրամադրված:

Հիշեցնենք, ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելու պատճառով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շումնուխ եւ Որոտան բնակավայրերում հաշվառված եւ բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիները մինչեւ 2023 թվականի հուլիս ամիսը ներառյալ ստացել են 68.000 ՀՀ դրամ աջակցություն:

Նյութերը՝ ԼիՆԱ ԵՐԻԱԶՈՐՅԱՆԻ

«ՍՈՒՐՄԱՆՈՒ»-Ի ՊԱՅԹՅՈՒՆՆ ԼՒ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՐԱԶԱՆԳԸ

16 անձի մահվան եւ մեկ անձի անհետ կորուցումի մասնառ դարձած «Սուրմալու» առևտրի կենտրոնի դայթյունի մեկ սահման շուկայ կլանա, սակայն թե՛ սուժողները, թե՛ նրանց փաստաբանները դժգոհ են, որ հարուցված քրեական գործի քննությունը դադարեցրել է իրականացվում: Ավելին՝ իրավադատ մարմինների ներկայացուցիչներին «մեղադրում են» կողմնակալ դիրքում: Մեկ սահման՝ փաստաբաններին չի հաջողվում հասնել «Սուրմալու»-ն քննադատող «Երեւանի դատախազների գործարան» ՓԲԸ-ի գույքի վրա արգելանք կիրառելու:

2021թ. ապրիլի 6-ին Երեւանի «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով հարուցված քրեական գործը միացվել է 2022թ. օգոստոսի 14-ին նույն հասցեում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով նախաձեռնված քրեական վարույթին: Գլխավոր դատախազությունից հայտնում են, որ 2021թ. հրդեհի հետեւանքով «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ին պատճառվել է 46 մլն 279 հազ., իսկ 16 տաղավարների այրման հետեւանքով պատճառված վնասի չափը կազմել է մոտ 15 մլն դրամ: Բացի այդ, 5 ՍՊԸ-ի եւ 6 անհատ ձեռնարկատիրոջ պատճառվել է խոշոր գույքային վնաս՝ ընդհանուր 505 մլն 421 հազ. դրամի չափով:



Լից, սակայն, ինչպես ինքն է պնդում, ապարդյուն:

Համաձայն տուժողների կողմից հայտնած տվյալների՝ պայթյունի հետեւանքով պատճառված գույքային վնասը կազմում է 1 մլրդ 521 մլն դրամ: Քրեական վարույթի շրջանակներում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունի 5 անձ:

Դատախազության փոխանցմամբ՝ 2022թ. «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունից հետո Երեւան քաղաքի դատախազի կողմից երկու միջնորդագիր է հասցեագրվել Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին, որից հետո մասնագետների կողմից 2022թ. սեպտեմբերի 8-ից մինչեւ սեպտեմբերի 12-ն ընկերությունում իրականացվել է ստուգում: Արդյունքում հայտնաբերվել են հրդեհային անվտանգության կանոնների խախտման բազմաթիվ դեպքեր: Նշված խախտումների վերաբերյալ կազմված արձանագրություններն ուղարկվել են նախաքննություն իրականացնող քննիչին քրեական վարույթի շրջանակներում այդ մասով եւս քննություն կատարելու նպատակով:

որը դրսևորվում է պետության կողմից կամ դիտավորյալ է արվում: Փաստն այն է, որ արգելանք չի դրվում»,- ասում է Տիգրան Սուրադյանը:

Փաստաբանի պնդմամբ՝ մինչ օրս «Սուրմալու» առևտրի կենտրոնը շահագործող կազմակերպության գույքի վրա արգելանք դրված չէ, որպեսզի տուժողները երաշխիք ունենան, որ իրենց կրած նյութական վնասները կփոխհատուցվեն: Արգելանք կիրառելու միջնորդությունը Քննչական կոմիտեի ներկայացրել են մի քանի անգամ, պատասխան չեն ստացել: Դրանից հետո, երբ վերջերս գործն ուղարկվել է Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտ, ստացվել է պատասխան, որ միջնորդության քննությունը հետաձգվում է, որպեսզի քննիչը ծանոթանա գործի նյութերին: «2021թ-ից երկու տարի է անցել. ինչ հանգամանք կա լրացուցիչ պարզելու. ամեն ինչ ավելի քան պարզ է: Մեղադրանքն առաջադրվել է ընկերության աշխատակիցներին, տնօրենին, փոխտնօրենին: Ընկերությունը գույքային պատասխանատվություն է կրում այդ աշխատողներին պատճառված վնասի համար, հետեւաբար պետք է ընկերության գույքի վրա կալանք դրվի»,- նշում է Տ. Սուրադյանը:

«Սուրմալու» տնավաճառում իրականացված ստուգման, արձանագրված խախտումների վերաբերյալ թե՛ իրավապահ մարմինները ցույց են տալիս կատարված աշխատանք, սակայն տուժողների ներկայացուցիչներն ու փաստաբանները հակառակն են պնդում: 2021թ. հրդեհի հետեւանքով տուժած «Լատե» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, փաստաբան Տիգրան Սուրադյանը մեզ հետ զրույցում ասում է՝ պայթյունում են, որպեսզի ընկերությունն իրեն պատճառված վնասների փոխհատուցումը ստանա. դա շուրջ 135 մլն դրամ է: Ըստ Սուրադյանի՝ հիմնովին այրվել է ընկերության գույքը:

Փաստաբանն ասում է՝ արգելանքի բացակայության պայմաններում ընկերության սեփականատերն այդ գույքը կարող է ծանրաբեռնել այլ իրավունքներով, օրինակ՝ բանկից վարկ վերցնել շուկայական վերակառուցելու նպատակով, եւ այնպիսի ահռելի պարտավորություններով ծանրաբեռնել, որ տուժողներից որեւէ մեկը չկարողանա հետագայում փոխհատուցում ստանալ:

Տեւական ժամանակ է՝ Տիգրան Սուրադյանը տարբեր գրություններ է հասցեագրում վարույթն իրականացնող մարմնին, դատախազություն, վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ դժգոհելով իրավապահ մարմինների անգործությունից, սակայն, ինչպես ինքն է պնդում, ապարդյուն:

- Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել են 1 անհետ կորած եւ 3 հետախուզվող: Կամավոր ներկայացել է 2 հետախուզվող:

տաբաններից մեկը նախկինում նույնպես աշխատել է դատախազական համակարգում եւ մոտ աշխատանքային հարաբերություններ է ունեցել Լ. Գրիգորյանի հետ: Տիգրան Սուրադյանը կասկած է հայտնել, որ այդ համագործակցության արդյունքում է, որ գործը դադարեցրել է տեղում, առաջ չի գնում, եւ ողջամիտ պատասխան չեն ստացել:

«Ես չեմ բացառում, որ նաեւ սրա հետ կապված է գործը գնացել Ազգային անվտանգության ծառայություն: Բայց ներկայում էլ ԱԱԾ-ից չեն հրավիրել, չեն հարցաքննել. չենք պատկերացնում, որ այս գործը առաջ է գնում»,- ասում է փաստաբան Սուրադյանը:

Տուժողների փաստաբանները նաեւ նշում են, որ ծանոթանալով տեսչական մարմնի արձանագրած խախտումներին, որ հրդեհի պատճառը եղել է հոսանքի կարճ միացում, ինչից հետո էլ տեսչական մարմինը հրդեհային անվտանգությանը վերաբերող մի շարք խախտումներ էր արձանագրել՝ միջնորդել են Երեւան քաղաքի դատախազին, որպեսզի դադարեցնեն առևտրի կենտրոնի շահագործումը: Փաստաբանների փոխանցմամբ՝ թե՛ դադարեցնել, թե՛ է հավանականությունը, որ երկրորդ հրդեհն ու պայթյունը տեղի կունենային: Առկա թերությունները կշտկվեն: Մինչդեռ պետական մարմինները տարիներ շարունակ հանդուրժել են այդ իրավիճակը:

Տիգրան Սուրադյանի խոսքով՝ երբ առաջին հրդեհից հետո դիմել են դատախազություն առևտրի կենտրոնի գործունեությունը դադարեցնելու համար, ընդհանրապես պատասխան չեն ստացել: Բանավոր հայտարարել են, որ տեսչական մարմինը պետք է այդ հարցը լուծեր, սակայն վերջինս էլ ասել է, որ քրեական գործի շրջանակում վարույթն իրականացնող մարմինը պետք է զբաղվեր:

Դատախազությունից մեզ հայտնում են, որ քրեական վարույթի շրջանակներում որեւէ պաշտոնատար անձի կամ իրավապահ մարմինների ներկայացուցիչ մեղադրանք չի առաջադրվել:

Ինչպես հայտնում են դատախազությունից, քրեական վարույթի նախաքննության ընթացքում փաստաբան Տ. Սուրադյանի ներկայացրած միջնորդություններն են բողոքները քննարկվել են, եւ դրանց վերաբերյալ համապատասխան որոշումներ են կայացվել Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իսկ քննիչին հայտնած բացարկը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Հարցրել էինք, թե ինչու են անգործություն դրսևորել վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձինք, որի մասին պնդում են փաստաբանները, ինչին ի պատասխան դատախազությունից հայտնում են, որ քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հսկող դատախազի եւ վերադաս դատախազի անգործության մասին հարցադրումը կոռեկտ չէ, այդպիսիք նախաքննության ընթացքում չեն արձանագրվել, հետեւաբար պատճառաբանությանը պայմանավորվածությունները տեղին չեն:

Գլխավոր դատախազությունից հայտնում են նաեւ, որ քրեական վարույթով արգելանք է կիրառվել քրեական վարույթով մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող 3 անձանց գույքերի նկատմամբ՝ ամբողջ ծավալով:

ՔՆՆՐ ԱՆՈՒԿԱՆ

ԿԱՐԾԻՔ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԱՆԱՏՈՒԿ ԱՅՑ՝ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻ ԱԾԽԱՏԱՄԵՆՅԱԿ

Արամ Խաչատրյանի սուն-բանգարանի այցելուները այսուհետ VR ակնոցների շնորհիվ հնարավորություն կունենան հայտնվել կոմպոզիտորի աշխատասենյակում և հետեւել «Փայլան» բալետից մի հասկածի՝ «Սուսերով դարի» ստեղծման գործընթացին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի է ունեցել «Սուսերով պար» վիրտուալ ցուցադրության շնորհանդեսը: «Սուսերով պար» վիրտուալ ցուցադրությունը ստեղծվել է ARLOOPA ընկերության և Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի համագործակցության արդյունքում:

VR ակնոցով այցելուները կտեսնեն Արամ Խաչատրյանին ստեղծագործական ակտիվ իրավիճակում. նա նվագում է, մոտենում է գրասեղանին, մտորում և նոտագրում է, հնչում է «Սուսերով պարի» երաժշտությունը:

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանն ընդգծում է, որ նորագույն տեխնոլոգիաները երկար տարիներ է՝ իրենց հաստատուն տեղն են գտել թանգարանների աշխարհում: Ըստ նրա՝ սա մի նոր մոտեցում է թանգարանային տեղեկատվությունը, պատմությունը և ցուցանմուշները այցելուներին ներկայացնելու համար:

«Նորագույն տեխնոլոգիաների գրագետ և ճիշտ օգտագործումը կարող է լինել շատ արդյունավետ և գրավել այցելուներին: Թանգարանը տարիներ շարունակ գնում է նմանատիպ նորույթների? Թանգարանի պատը նույնպես կենդանանում է հավելվածի միջոցով: Թանգարանի ցուցասրահներում նույնպես ունենք նմանատիպ հետաքրքիր նորույթներ: Այս ծրագիրը իրականացրել ենք ARLOOPA ընկերության հետ, որի հետ համագործակցում ենք շատ վաղուց: Ծրագիրը սկսել ենք տարվա սկզբին, քանի որ այն բավականին մանրակրկիտ աշխատանք էր պահանջում ստանալու



համար այն արդյունքը, որ հիմա ունենք»,- նշում է թանգարանի տնօրենը:

ARLOOPA ընկերության առավել կարևոր նախագծերի ղեկավար Արմինե Ղազարյանն ընդգծեց, որ սա իրենց առաջին համագործակցությունը չէ թանգարանի հետ:

«Նշեմ, որ նախագիծը իրականացվել է մի քանի փուլով՝ դիզայն, մոդելավորում, այնուհետև՝ անիմացիայի ստեղծում: Նախապես համաձայնեցված նյութերի հիման վրա ստեղծել ենք Արամ Խաչատրյանի եռաչափ մոդելը, որպեսզի այն հնարավորինս իրական լինի, այնու-

հետև աշխատասենյակը դետալ առ դետալ մշակվել է»,- ասաց նա:

Արմինե Ղազարյանն ընդգծեց, որ նորագույն տեխնոլոգիական լուծումների կիրառումն առհասարակ բոլոր թանգարաններում ուրույն դեր է կատարում ժամանակակից սերնդի ուշադրությունը թանգարանի ուղղությամբ գրավելու տեսակետից: Քանի որ նոր սերունդը նոր պահանջներ ու հետաքրքրություններ ունի, շատ կարևոր է, որպեսզի եւ մասնավոր ոլորտը, եւ պետությունն աջակցեն նմանատիպ նախագծերի իրականացմանը:

ՀՐԱՎԵՐ

ԱԾԽԱՐՆԱՐՈՉԱԿ ԳԻՐԻԺՈՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Լուս Անջելեսի «Հոլիվուդ բոուլ»-ում (Hollywood bowl) կայացած համերգից հետո տեղի է ունեցել Լուս Անջելեսի ֆիլիպինյան նվագախմբի գեղարվեստական ղեկավար, աշխարհահռչակ դիրիժոր Գուստավո Դուդամելի և Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի նախատեսված հանդիպումը:

Քննարկվել են մասնավոր Դուդամելի և Վենեսուելայի Սիմոն Բոլիվար երիտասարդական սիմֆոնիկ նվագախմբի՝ Երեւանում հաջորդ տարի կայանալիք հյուրախաղերին առնչվող խնդիրները:

Հանդիպման ընթացքում Գոշ Սարգսյանն աշխարհահռչակ երաժշտին է փոխանցել Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավիսյանի պաշտոնական հրավերը՝ Երեւանում անցկացվելիք միջազգային երաժշտական փառատոնի ընթացքում բացօթյա համերգային ծրագրով հանդես գալու առաջարկով:

«Քաղաքային մշակույթի նոր միջավայր ձևավորելու, Երեւանը որպես համաշխարհային մշակութային գործընթացների գործուն մասնակից դիրքավորելու հանձնառության ճանապարհին քաղաքապետարանն իրականացնում է հանրության համար բարձրարժեք մշակութային-իրադարձային միջոցառումներ, որի մեկնարկը տրվեց այս տարվա հունիսին՝ Թունիսի այգում Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակին նվիրված բալետային բացառիկ երեկոների իրականացմամբ»,-նշել է Գոշ Սարգսյանը:

Փառատոնային մշակույթը խթանելու համար Երեւանի քաղաքապետարանը նախատեսում է անցկացնել բազմաժանր նոր ծրագրեր և միջոցառումներ, ապահովել դրանց հասանելիությունն ու մատչելիությունը մայրաքաղաքի բնակիչների, հյուրերի և զբոսաշրջիկների համար: Այդ նպատակով քաղաքապետարանն առաջիկայում ձեռք կբերի բեմական և լուսաձայնային գերժամանակակից անհրաժեշտ տեխնիկա:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՑՈՒՂԱՐՁ

Billboard-ի ՀԻԹ ԸՋԵՐԹՈՒՄ

Հայ երաժշտական արդյունքներ, երգահան և կոմպոզիտոր Վահագն Ստեփանյանը դարձել է առաջին հայ անկախ արտիստը, ով տեղ է գրավել Billboard-ի հիթ-շքերթում՝ խորհրդանշելով նշանակալից իրադարձություն հայ երաժշտության պատմության մեջ: Նրա նոր՝ «A New Chapter» ձայնասկավառակը գերադեցրել է 5-րդ հորիզոնականը Billboard Contemporary Jazz Albums աղյուսակում: Ձայնասկավառակը ներառում է համագործակցություններ ճանաչված արտիստների հետ ինչպիսիք են լեգենդար Դեյվ Կոզը, Էրիկ Մուրը, Գրեգ Զոուն, Իդա Նիլսենը, Մարկ Լետիերին և Ֆիլիպ Լասիտերը՝ ընդլայնելով դրա գրավելությունը և ցուցադրելով համաշխարհային երաժիշտների հարուստ խառնուրդը: Սա իսկապես արժեքավոր և նշանակալի ձեռքբերում է հայ արվեստագետների պատմության մեջ, համաշխարհային մրցունակ շուկայում:

Այս հաջողությունների կողքին Վահագնը նաև «Գրեմմի»-ի միակ քվեար-

կող անդամն է Հայաստանից, ով ներկայացնում է Լուս Անջելեսի Chapter-ը, ինչպես նաև Grammy մենթոր է:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԳՐՔԻ ԸՆՈՐՎԱՆԳԵՍ

Երեւանում տեղի է ունեցել գրող, գործարար Կիրակոս Գույումջյանի «Իմ երթը երկաթի հետ» գրքի շնորհանդեսը՝ Հայաստանի գրողների միության հովանավորությամբ:

Միջոցառմանը մասնակցել են Գրողների միության անդամներ, դիվանագետներ, մշակութային, կրոնական գործիչներ:

Շնորհանդեսի ընթացքում գրքից իրենց ստացած տպավորություններով են կիսվել Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչ Հովհաննես Ալեքսանյանը, գրող Սագո Արյանը և դեղագործ Հակոբ Նալբանդը:

Շնորհանդեսի ընթացքում ցուցադրվել են Մեծի Տանն Կիլիկոն Կաթողիկոսության հայագիտական կենտրոնի տեսուչ Ահարոն Շիրադմյանի, «Ազդակ» օրաթերթի խմբագիր Շահան Գանտահարյանի, «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոյունյանի, հրապարագիր Կարպիս Մինասյանի տեսաուղերձերը:

Միջոցառման ավարտին կատարվել է զինեծոնի արարողություն:

Կիրակոս Գույումջյանը ծնվել է Սիրիայի Հալեպ քաղաքում: 1972 թվականին տեղափոխվել է Քուվեյթ: 1982 թվականին Քուվեյթում հիմնել է Metal Center ընկերությունը, որը գործում է մինչ օրս: 2003 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ պարգևատրվել է «Ներսես Շնորհալի» բարձր շքանշանով՝ որպես զնահատանը Հայաստանում և Արցախում նրա ունեցած բազմաթիվ ծառայությունների:

2023 թվականին Ն.Ս.Օ.Տ.Տ. Մեծի Տանն Կիլիկոն Կաթողիկոս Արամ Ա ձեռամբ պարգևատրվել է «Ասպետ» շքանշանով: Գույումջյանը հանդես է գալիս նաև վերլուծական հոդվածներով, որոնք լույս են տեսնում արաբական և հայկական լրատվամիջոցներում:

● Հունիսի 14-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Դեպի վերջ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս սահմալ շինարարության /հանդման/ թույլտվություն:
Հայկ Համբարձումյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Շինարարության թույլտվության համար անհրաժեշտ է՝
 - ներկայացնել համապատասխան դիմում համայնքի ղեկավարին: Դիմումին կից ներկայացվում են.
 - կառուցվող օբյեկտի Նախագծանախահաշվային փաստաթղթերը,
 - պայմանագիր՝ լիցենզավորված շինարարական կազմակերպության հետ,
 - պայմանագիր՝ լիցենզավորված տեխնիկական հսկողության վերաբերյալ,
 - պայմանագիր՝ լիցենզավորված հեղինակային հսկողության վերաբերյալ,
 - տեղական տուրքերի եւ վճարների մուծման անդորրագրերը՝ համապատասխանաբար 75000 եւ 5000 դրամ: Եվ բնակիչը ստանում է համապատասխան շինարարության թույլտվություն:
Քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Քանդման թույլտվություն ստանալու համար՝
 - բնակչի կողմից դիմում՝ համայնքի ղեկավարին,
 - քանդվող շինության սեփականության վկայականի պատճենը,
 - տեղական տուրքի եւ վճարի անդորրագրեր՝ 7500 եւ 5000 դրամ:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող եմ անել, եթե ջրագծի վթարի դրանառով ջրաչափն աղանդնաճեղու կարիք կա:
Արտակ Զոհրաբյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ջրագծի վթարի դեպքում, երբ անհետաձգելի վերանորոգում է պահանջվում, բաժանորդը իրավունք ունի պոկել ջրաչափի կնքված հողգրահի կնիքը՝ այդ մասին «Վեոլիա ջուր» ՓԲԸ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կամ Հեռախոսային կենտրոն զանգահարելու միջոցով տեղեկացնելուց, բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը, ջրաչափի ցուցմունքը հայտնելուց եւ «Վեոլիա ջուր» ՓԲԸ համաձայնությունը ստանալուց հետո:
«Վեոլիա ջուր» ՓԲԸ

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից ջրաչափը ենթակա է վերակնքման բաժանորդի կողմից կնիքը պոկելու մասին տեղեկացնելու պահից մինչեւ 10 աշխատանքային օրվա ընթացքում:
 Փոկված հողգրահի կնիքը բաժանորդը պարտավոր է պահպանել եւ առետրային հաշվառքի սարքի վերակնքման պահին հանձնել մատակարարին:

ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գեղարքունիքի մարզում



«Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորատուս համայնքից սկսած մինչեւ Երանոս համայնքն ընկած անտառային հատվածում սոճիները համատարած չորացել են: «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է, թե ինչպես են արդեն իսկ համարակալվել այդ ծառաբնույթները, եւ առաջին հայացքից տպավորություն է, որ պատաստվում են իրականացնել ծառերի սպանդ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
 Բաժանորդագրվելու
 համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Սեդիա» ՍՊԸ
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր Նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



☀	Շիրակ	+5 + 10 +24 + 27	☀	Արարատ	+16 + 20 +32 + 34
☀	Կոտայքի լեռներ	+4 + 10 +23 + 26	☀	Արմավիր	+14 + 17 +32 + 34
☀	Կոտայքի Նախալեռներ	+13 + 16 +29 + 31	☀	Վայոց ձորի լեռներ	+14 + 16 +32 + 34
☀	Գեղարքունիք	+5 + 10 +22 + 26	☀	Վայոց ձորի Նախալեռներ	+16 + 19 +32 + 35
☀	Լոռի	+5 + 10 +26 + 30	☀	Սյունիքի հովիտներ	+19 + 22 +30 + 33
☀	Տավուշ	+10 + 15 +26 + 30	☀	Սյունիքի Նախալեռներ	+11 + 13 +23 + 27
☀	Արագածոտնի լեռներ	+4 + 10 +22 + 24	☀	ԼՂՀ	+16 + 19 +28 + 33
☀	Արագածոտնի Նախալեռներ	+12 + 17 +28 + 32	☀	Երեւան	+14 + 16 +31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 12.7.2023
Պատկերը/Պատկերակցությունը հարցի, 2. Կարգի, 4. Կարգի, 2021

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: